

**Հանրապետությունում անասնաճարակային իրավիճակի և
«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի
շրջանակներում իրականացված միջոցառումների արդյունքների մասին**

Հայաստանի Հանրապետությունում կայուն անասնաճարակային իրավիճակը պահպանելու նպատակով 2014 թվականի առաջին կիսամյակում «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում իրականացվել են ախտորոշիչ, կանխարգելիչ և ախտահանիչ միջոցառումներ: Ծրագրի շրջանակներում բրուցելոզ և տուբերկուլյոզ հիվանդությունների նկատմամբ իրականացվել են ախտորոշիչ, իսկ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների՝ դաբաղ և սիբիրախտ, խոշոր եղջերավոր կենդանիների՝ խշխշան պալար, պաստերելոզ, ոչխարների՝ բրադզոտ, խոզերի՝ դասական ժանտախտ և թռչունների՝ կեղծ ժանտախտ հիվանդությունների նկատմամբ՝ կանխարգելիչ միջոցառումներ: Միաժամանակ միջոցառումներ են իրականացվել մեղուների վարրոատոզ հիվանդության բուժման ուղղությամբ:

«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում ընդգրկված միջոցառումների իրականացման համար ՀՀ պետական բյուջեից նախատեսվել է 594,0 մլն դրամ, որից օգտագործվել է 576,2 մլն դրամ, իսկ 17,8 մլն դրամը խնայվել է: 576,2 մլն դրամից 16,4 մլն դրամն ուղղվել է ախտորոշիչ, 11,6 մլն դրամը՝ ախտահանիչ միջոցների, իսկ 548,2 մլն դրամը՝ պատվաստանյութերի ձեռքբերմանը:

Ընդ որում, պատվաստանյութերի ձեռքբերման գումարի 82%-ը, կամ 448,7 մլն դրամն օգտագործվել է ավելի քան 2 մլն չափաքանակ (դոզա) դաբաղի պատվաստանյութի ձեռքբերման համար:

2014 թվականին իրականացվող հակաանասնաճարակային միջոցառումների համար ձեռք է բերվել 1 մլն 267 հազար չափաքանակ ախտորոշիչ միջոցներ («Ռոզ Բենգալ» և «Տուբերկուլին» ախտորոշիչներ), 7 մլն 397 հազար չափաքանակ պատվաստանյութեր և 3000 կգ ախտահանիչ նյութեր (կաուստիկ սոդա, ֆորմալին և քլորակիր):

2014 թվականի առաջին կիսամյակում «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում, ընդհանուր առմամբ իրականացվել են 6 մլն 25 հազար ախտորոշումներ և պատվաստումներ, որից 755575 ախտորոշում՝ տավարի բրուցելոզ և տուբերկուլյոզ, ինչպես նաև մանր եղջերավոր կենդանիների բրուցելոզ հիվանդությունների նկատմամբ, իսկ 5 մլն 270 հազարը՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների, խոզերի և թռչունների 7 հիվանդությունների նկատմամբ կատարված պատվաստումներն են:

2014 թվականի 1-ին կիսամյակում իրականացված հակաանասնահամաճարակային միջոցառումները

N	մարզ	Խ.Ե.Կ.						Մ.Ե.Կ.				խոզ	թռչուն	ընդամենը
		բրուցելոզ	տուբերկուլոզ	սիբիրախտ	էմկար	դաբաղ	պաստերելոզ	բրուցելոզ	սիբիրախտ	դաբաղ	բրադզոտ			
1.	Արարատ	20000	3411	58783	41983	58196	532	16740	109300	81177	21734	47502	90800	549558
2.	Արմավիր	24038	4388	68950	50231	67307	0	56474	124050	91166	45346	53666	126134	711750
3.	Վայոց Ձոր	11980	1820	30591	21015	30404	4670	15385	21377	21377	1150	4742	36780	201291
4.	Շիրակ	588854	8339	147015	96648	145646	0	57340	110150	68976	7233	40068	125353	865622
5.	Գեղարքունիք	64979	16311	158517	102800	156492	17175	74281	137047	50016	13434	32054	192333	1015439
6.	Լոռի	45997	6487	112798	74994	112501	49363	21917	38970	4000	4160	27771	78241	577199
7.	Սյունիք	29556	6669	72262	51115	76500	33780	21800	110839	3082	2312	28640	79970	516525
8.	Արագածոտն	46223	9818	112988	77982	113973	0	52806	125574	47071	0	26541	81731	694707
9.	Կոտայք	30101	4435	75536	51075	73810	30012	11146	52107	31597	0	35837	79683	476339
10.	Տավուշ	18787	2386	50029	31519	45415	24759	10801	20219	4360	14918	47927	106283	377403
11.	Երևան	1194	683	3414	2564	3540	0	429	2240	0	3563	10188	12780	40595
	Ընդամենը	351709	64747	890883	601326	883784	160291	339119	851873	402822	113850	354936	1010088	6025428

Հարկ է նշել, որ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում իրականացված ախտորոշումների և պատվաստումների շուրջ 17%-ը (1015439) իրականացվել է ՀՀ Գեղարքունիքի մարզում, իսկ 14,4%-ը՝ ՀՀ Շիրակի մարզում, 11,8%-ը՝ ՀՀ Արմավիրի մարզում, 11,5%-ը՝ ՀՀ Արագածոտնի մարզում, իսկ մյուս մարզերում՝ 3,3-9,5%-ը:

Հանրապետությունում բրուցելոզով հիվանդ կենդանիներին բացահայտելու նպատակով ընթացիկ տարվա առաջին կիսամյակում ախտորոշվել են շուրջ 363 հազար գլուխ խոշոր և 339 հազար գլուխ մանր եղջերավոր կենդանիներ: Ախտորոշման արդյունքում հետազոտված խոշոր եղջերավոր կենդանիներից 3074 գլուխը կամ 0,85 %-ը և մանր եղջերավոր կենդանիներից 1582 գլուխը կամ 0,47 %-ը հանդիսացել են բրուցելոզով հիվանդ կենդանիներ:

Հարկ է նշել, որ հիվանդության ամենաբարձր ցուցանիշները խոշոր եղջերավոր կենդանիների շրջանում արձանագրվել են ՀՀ Կոտայքի (1453 գլուխ կամ նմուշառված կենդանիների 4,5 %-ը), ՀՀ Արմավիրի (374 գլուխ կամ 1,5 %-ը), ՀՀ Արագածոտնի (482 գլուխ կամ 1,0%) և ՀՀ Վայոց Ձորի (121 գլուխ կամ 1,0%-ը) մարզերում, մինչդեռ մյուս մարզերում, հիվանդ կենդանիների տեսակարար կշիռը 1%-ից էլ ցածր է, իսկ ՀՀ Տավուշի մարզում բրուցելոզով հիվանդ կենդանի չի հայտնաբերվել:

2014 թվականի հուլիսի 10-ի դրությամբ բրուցելոզով հիվանդ բոլոր մանր եղջերավոր կենդանիներն ենթարկվել են սանիտարական սպանդի, իսկ 3074 խոշոր եղջերավոր կենդանիներից սպանդի են ենթարկվել 3068 գլուխը:

2014 թվականի հունվար-հունիս ամիսներին նմուշառված, դրական հակազոած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների ամփոփ պատկերը 2014 թվականի հուլիսի 10-ի դրությամբ

h/h	մարզեր	խոշոր եղջերավոր կենդանիներ			մանր եղջերավոր կենդանիներ.		
		նմուշառվել է	որից դրական	որից հարկադիր սպանդ.	նմուշառվել է	որից դրական	որից հարկադիր սպանդ.
1	Արագածոտն	48321	482	482	52806	94	94
2	Արարատ	21285	139	139	16740	443	443
3	Արմավիր	24756	374	374	56474	164	164
4	Գեղարքունիք	64979	149	149	74281	30	30
5	Լոռի	46997	3	3	21917	0	0
6	Կոտայք	32101	1453	1447	11146	166	166
7	Շիրակ	59854	259	259	57340	164	164
8	Սյունիք	30556	63	63	21800	0	0
9	Վայոց-Ձոր	11980	121	121	15385	521	521
10	Տավուշ	20656	0	0	10801	0	0
11	Երևան	1194	31	31	429	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ		362679	3074	3068	339119	1582	1582

Բրուցելոզ հիվանդության տարածվածության վերաբերյալ կատարված վերլուծությունները ցույց են տվել, որ թեև հիվանդ կենդանիների տեսակարար կշիռը մոտ է

նախորդ տարիների միջին ցուցանիշներին, այնուամենայնիվ մտահոգիչ է ՀՀ Կոտայքի մարզում տիրող իրավիճակը, քանի որ հանրապետությունում հայտնաբերված հիվանդ կենդանիների ավելի քան մեկ երրորդը կենտրոնացված է այս մարզում, իսկ մարզի հիվանդ կենդանիների ավելի քան 70%-ը՝ Գեղաշեն համայնքում:

ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքում ընթացիկ տարվա առաջին կիսամյակում նմուշառված 2074 խոշոր եղջերավոր կենդանիներից 937 գլուխը կամ 45,2%-ը հանդիսացել են հիվանդ կենդանիներ, որոնցից 931 գլուխն ենթարկվել է հարկադիր սպանդի: Պետք է նշել, որ Գեղաշեն համայնքի նմուշառված կենդանիների արյան լաբորատոր փորձաքննության արդյունքները ստանալուն պես ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն անմիջապես համապատասխան գրությամբ դիմել է ՀՀ Կոտայքի մարզի մարզպետին՝ հիվանդության տարածումը կանխելու նպատակով անհապաղ քայլեր ձեռնարկելու առաջարկությամբ: Դրան հաջորդեց ՀՀ Կոտայքի մարզպետի 2014 թվականի հունիսի 4-ի N 275-Ա որոշումը՝ Գեղաշեն համայնքում կարանտին սահմանելու մասին: Ներկայումս համայնքում տեղակայված են կարանտին հսկողության կետեր և իրականացվում է շուրջօրյա հերթապահություն:

Համայնքում հայտնաբերված 937 հիվանդ կենդանիներից 2014 թվականի հուլիսի 10-ի դրությամբ 931 գլուխն ենթարկվել է սպանդի: Անասնաճարակային իրավիճակը համայնքում կայուն է, իսկ առկա գլխաքանակից պարբերաբար իրականացվում է արյան նմուշառում և լաբորատոր փորձաքննություն:

Ներկայումս, սահմանված ժամանակացույցին համապատասխան, հանրապետության բոլոր մարզերում ընթանում են երկրորդ կիսամյակում նախատեսված հակահամաճարակային միջոցառումները, որոնց համար անհրաժեշտ ախտորոշիչ, կանխարգելիչ և ախտահանիչ միջոցներն արդեն իսկ ձեռք են բերված: